Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն № 2

ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի 2024-2025 ուս. տարվա
գիտական խորհրդի նիստի

ք.Երևան 13 սեպտեմբերի 2024թ.

Ներկա էին՝ գիտխորհրդի 20 անդամներից 14–ը (ներկայաթերթիկը կցված է):

Նախագահ՝ ք.գ.թ., դոցենտ Ա. Մկրտչյան

Գիտական քարտուղար՝ ք.գ.թ., դոցենտ Ա. Դադայան

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. **Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարմացիայի ինստիտուտի Կենսաբժշկագիտության ամբիոնի երկրորդ տարվա հեռակա անվճար ուսուցմամբ ասպիրանտ Անժելա Տիգրանի Հարությունյանի ատեստավորման հարցը:**
2. **ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի ուսանողներին անվանական կրթաթոշակներ նշանակելու հարցը:**
3. **Ընթացիկ հարցեր:**

3.1.Ֆարմքիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոնի առկա անվճար ուսուցմամբ ասպիրանտ Էմմա Խաչատրյանի՝ « β-դիրքում ալկինոլային և պիպերազինային տեղակալիչներ պարունակող (S)-α-ալանինի նմանակների ասիմետրիկ սինթեզ և կենսաբանական հատկությունների հետազոտում» թեմայով տեղական դրամաշնորհի շրջանակներում առաջին տարվա ընթացքում կատարված աշխատանքների հաշվետվության քննարկման և հաստատման հարցը:

ՔՆՆԱՐԿԵՑԻՆ ԵՎ ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. **Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարմացիայի ինստիտուտի Կենսաբժշկագիտության ամբիոնի երկրորդ տարվա հեռակա անվճար ուսուցմամբ ասպիրանտ Անժելա Տիգրանի Հարությունյանի ատեստավորման հարցը:**

Լսեցին՝ Ֆարմացիայի ինստիտուտի գիտական քարտուղար ք.գ.թ., դոցենտ Անի Դադայանը, ով հաղորդեց գիտխորհրդի անդամներին, որ հարցը քննարկվել է

Կենսաբժշկագիտության ամբիոնի ընդլայնված նիստում (նիստ 2, առ 06.09.2024թ.) և տեղեկացրեց, որ ասպիրանտը մասնակցել է «Ընդհանուր պատրաստվածություն» կրթամասի «Պարտադիր դասընթացներ և քննություններ» և «Ընտրովի դասընթացներ» բաժիններով նախատեսված դասընթացներին՝ ստանալով անհրաժեշտ կրեդիտները։ Հաշվետու տարում ասպիրանտ Ա. Հարությունյանի կողմից կատարված գիտահետազոտական աշխատանքներն ամփոփվել և տպագրվել են մեկ հոդված՝ «Կենսաքիմիական գիտությունների ժամանակակից ձեռքբերումները պրոֆիլակտիկ և կլինիկական բժշկության մեջ» վերնագրով։ Ա. Հարությունյանը, ատենախոսական աշխատանքի ղեկավարի հետ միասին, մշակված ծրագրով շարունակում է իրականացնել հետագա գիտահետազոտական աշխատանքները։ Հաշվի առնելով ասպիրանտի կողմից կատարված աշխատանքները՝ ամբիոնը երաշխավորել է ատեստավորման (քաղվածքը կցվում է)։

Որոշեցին՝ բաց քվեարկությամբ (միաձայն), հաշվի առնելով Կենսաբժշկագիտության ամբիոնի կարծիքը՝ ատեստավորել ասպիրանտ Անժելա Տիգրանի Հարությունյանին։

2. ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի ուսանողներին անվանական կրթաթոշակներ նշանակելու հարցը։

Լսեցին՝ Ֆարմացիայի ինստիտուտի գիտական քարտուղար ք.գ.թ. Ա. Դադայանը, ով գիտխորհրդի անդամներին տեղեկացրեց, որ Նազելի Չարչյանի և Լևոն Ռոտինյանի անվան անվանական կրթաթոշակ ստացող ուսանողներն ավարտել են իրենց ուսումը մագիստրատուրայում և անհրաժեշտ է ներկայացնել երկու ուսանողի թեկնածություն՝ վերը նշված անվանական կրթաթոշակներ նշանակելու համար։ Նա նշեց, որ համաձայն «ԵՊՀ ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգի» 36-րդ կետի, անվանական կրթաթոշակի կարող են հավակնել 4 կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմությամբ (ՄՈԳ>18) և գիտական ու հասարակական ակտիվությամբ ուսանողները։

Ելույթ ունեցան՝ գիտխորհրդի նախագահ Ա. Մկրտչյանը, անդամներ՝ Ա. Հովհաննիսյանը, Հ. Սիմոնյանը, Ս. Պետրոսյանը, ովքեր առաջարկեցին Նազելի

Չարչյանի և Լևոն Ռոտինյանի անվան անվանական կրթաթոշակի ներկայացնել բակալավրիատից և մագիստրատուրայից մեկական ուսանողի թեկնածություն՝ հաշվի առնելով այն համգամանքը, որ մագիստրատուրայի ուսանողները հնարավորություն ունեն ստանալ նաև հայրենական դեղագործական ընկերությունների կողմից տրամադրվող անվանական կրթաթոշակներ:

Ա. Դադայանը տեղեկացրեց, որ «Ֆարմացիա» մասնագիտության բակալավրիատի ուսանողների շարքում գերազանց առաջադիմություն և հասարակական ակտիվություն է դրսևորել 4-րդ կուրսի ուսանողուհի Մարիամ Մարտունի Մարգարյանը: Վերջին երեք կիսամյակում Մարիամ Մարգարյանի ՄՈԳ>18, միայն 3-րդ կիսամյակում ՄՈԳ = 17,67, որը գրանցվել էր մինչև տարկետում գնալը: Ուսումնառության հետագա ընթացքում Մարիամ Մարգարյանը դրսևորել է գերազանց առաջադիմություն, գիտական ու հասարակական ակտիվություն և ներկայումս ՄՈԳ>18: Ելույթ ունեցողներն առաջարկեցին Մարիամ Մարգարյանի թեկնածությունը՝ Նազելի Չարչյանի անվան անվանական կրթաթոշակի ներկայացնելու համար:

Մագիստրատուրայի ուսանողներից անվանական կրթաթոշակի ներկայացնելու համար ելույթ ունեցողներն առաջակեցին «Ֆարմացիա» մասնագիտության մագիստրատուրայի ուսանողուհի Հեղինե Ստեփանի Օհանջանյանի թեկնածությունը, ով երեք կիսամյակ դրսևորել է գերազանց առաջադիմություն (ՄՈԳ>18), միայն մեկ կիսամյակ ՄՈԳ= 17,65: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հեղինե Օհանջանյանը գերազանցությամբ շարունակում է իր ուսումը և այժմ նաև մասնակցում է «Էրազմուս +» կարճաժամկետ կրթական ծրագրին ու մեկնել է Ֆրանսիա, առաջարկեցին նրա թեկնածությունը՝ Լևոն Ռոտինյանի անվան անվանական կրթաթոշակի ներկայացնելու համար:

Որոշեցին՝ Ֆարմացիայի ինստիտուտի գիտական խորհուրդը միաձայն որոշեց.

1. Ներկայացնել «Ֆարմացիա» մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողուհի Մարիամ Մարտունի Մարգարյանին՝ Նազելի Չարչյանի անվան կրթաթոշակի:
2. Ներկայացնել «Ֆարմացիա» մասնագիտության մագիստրատուրայի ուսանողուհի Հեղինե Ստեփանի Օհանջանյանին՝ Լևոն Ռոտինյանի անվան կրթաթոշակի:

3. Ընթացիկ հարցեր:

Լսեցին՝ ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարմքիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոնի առկա անվճար ուսուցմամբ ասպիրանտ Էմմա Խաչատրյանին, ով համառոտ ներկայացրեց 23AA-1D021 ծածկագրով « β-դիրքում ալկինոլային և պիպերազինային տեղակալիչներ պարունակող (S)-α-ալանինի նմանակների ասիմետրիկ սինթեզ և կենսաբանական հատկությունների հետազոտում» վերնագրով դրամաշնորհի կատարման առաջին տարվա հաշվետվությունը: Էմմա Խաչատրյանը նշեց, որ հաշվետու ժամանակահատվածում նախագծի շրջանակներում սինթեզվել են ելային ամինաթթվային կոմպլեքսները, հաջորդիվ կիրականացվեն ոչ սպիտակուցային ամինաթթուների սինթեզի և դրանց կենսաբանական հատկությունների ուսումնասիրման աշխատանքները: Թեմայի կատարման աշխատանքներն իրականացվել են ըստ նախօրոք հաստատված օրացուցային պլանի: Ստացված արդյունքների հիման վրա տպագրության է պատրաստվում նաև մեկ հոդված:

Եզույթ ունեցան՝ գիտխորհրդի անդամներ Հայարփի Սիմոնյանը, Անահիտ Հովհաննիսյանը և Սաթենիկ Պետրոսյանը, ովքեր առաջարկեցին հաստատել Էմմա Խաչատրյանի 23AA-1D021 ծածկագրով դրամաշնորհի կատարման վերաբերյալ առաջին տարվա հաշվետվությունը:

Որոշեցին՝ (միաձայն) հաստատել 23AA-1D021 ծածկագրով « β-դիրքում ալկինոլային և պիպերազինային տեղակալիչներ պարունակող (S)-α-ալանինի նմանակների ասիմետրիկ սինթեզ և կենսաբանական հատկությունների հետազոտում» վերնագրով դրամաշնորհի կատարման առաջին տարվա հաշվետվությունը:

Գիտական խորհրդի նախագահ՝
ք.գ.թ, դոցենտ **Ա. Մկրտչյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝
ք.գ.թ., դոցենտ **Ա. Դաղայան**